

0603 «Ֆինանսներ» զբաղմունքի նկարագիրը

Մասնագիտության անվանումը	Ֆինանսիստ
Դերը	Ֆինանսական բաժնի/վարկային բաժնի անմիջական ղեկավարությամբ ֆինանսական գործառնությունների, ֆինանսական պլանավորման, շահույթի բաշխման, ֆինանսական կանխատեսումների, ֆինանսական փաստաթղթերի կազմման և ստուգման, ազատ ֆինանսական միջոցների ներդրման և փոխառու միջոցների ներգրավման գործընթացների, ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմման, վարկային և ֆինանսական խորհրդատվության, ներդրումային ծրագրերի/վարկային հայտերի կազմման, տվյալների պահպանության աշխատանքների ապահովում:
Խնդիրների բնագավառը	<ol style="list-style-type: none"> 1. Կազմակերպության ֆինանսական գործառնությունների փաստաթղթավորում և գրանցում, 2. կազմակերպության ֆինանսական գործունեության արդյունքների հաշվետվությունների կազմում, 3. ֆինանսական պլանավորում, 4. կազմակերպության ազատ դրամական միջոցների ներդրման և փոխառու միջոցների ներգրավման աշխատանքներ, 5. կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, 6. ֆինանսական/ վարկային խորհրդատվություն, 7. վարկային հայտերի, ներդրումային ծրագրերի կազմում և մշակում, 8. ֆինանսական գործունեության արդյունքների ամփոփում և տվյալների բազայում, գրանցում և պահպանում:
Խնդիր N1	Կազմակերպության ֆինանսական գործառնությունների փաստաթղթավորում և գրանցում
Գործընթաց առաջին	Կազմակերպությունում գործող փաստաթղթաշրջանառության կարգի համաձայն հավաքում և կազմում է ֆինանսական գործառնություններին վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը (հաշիվներ, ակտեր, հաշվետվություններ, հաշվարկներ, տեղեկանքներ և այլն), ստուգում է դրանց լրացման ճշտությունը և վավերապայմանների առկայությունը, թերությունների և սխալների հայտնաբերման դեպքում ձեռնարկում է անհարաժեշտ քայլեր դրանց վերացման և ուղղման նպատակով:
Կատարման չափանիշը	Սահմանված ժամկետներում ապահովված են կազմակերպության ֆինանսական գործառնությունները հաշվառելու (գրանցելու) համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ լրացված և վավերացված սահմանված կարգով:
Գործընթաց երկրորդ	Ֆինանսական գործառնությունների փաստաթղթերի հիման վրա համապատասխան գրքերում, թղթային կամ էլեկտրոնային գրանցամատյաններում և (կամ) համակարգչային ծրագրերում գրանցում է ֆինանսական գործառնությունների իրականացման ամիս, ամսաթիվը, բովանդակությունը, քանակա-գումարային տվյալները, հիմնավորող փաստաթղթերի տվյալները և այդ գործառնությունների հաշվառման նպատակով անհրաժեշտ այլ տեղեկատվությունը:
Կատարման չափանիշը	Կազմակերպության բոլոր ֆինանսական գործառնությունները սահմանված ժամկետներում և կարգով գրանցված են համապատասխան գրանցամատյաններում, գրքերում և (կամ) համակարգչային ծրագրերում:
Խնդիր N2	Կազմակերպության ֆինանսական գործունեության արդյունքների հաշվետվությունների կազմում
Գործընթաց առաջին	Ընթացիկ ժամանակահատվածի կտրվածքով ֆինանսական գործառնությունների տվյալների ամփոփում, վերլուծում, գնահատում և ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմում:

	Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են կազմակերպության ֆինանսական դրության վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ՝ պետական բյուջեի, հարկային մարմինների, բանկային հաստատությունների, մատակարարների հանդեպ ունեցած պարտավորությունների, դրամարկղում և առևտրային բանկերում ունեցած հաշվարկային հաշիվներում առկա դրամային մնացորդների վիճակի, շրջանառու միջոցների հաշվարկի, հիմնական միջոցների վիճակի, կուտակված մաշվածքի, ընթացիկ ժամանակահատվածում գուտ շահույթի և շահութաբերության վերաբերյալ
Կատարման չափանիշը	Ընթացիկ ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների ամփոփ վերլուծական հաշվետվություն՝ ընկերության ներկա իրավիճակի, գործունեության արդյունավետության և կանխատեսվող հնարավորությունների վերաբերյալ:
Խնդիր N3	Ֆինանսական պլանավորում
Գործընթաց առաջին	Իրականացվում է ընկերության ներկա իրավիճակի, շուկայում գրաված դիրքի, մրցակցային դաշտի, կազմակերպական կառուցվածքի վերլուծություն, արտադրության պլանավորում և ֆինանսական պլանավորում՝ Հաշվապահական հաշվեկշռի մշակում և պլանավորում, Եկամուտների և Ծախսերի հաշվարկում և պլանավորում, Դրամական հոսքերի մուտքերի և ելքերի հաշվարկում և պլանավորում:
Կատարման չափանիշը	Ընթացիկ ժամանակահատվածի կտրվածքով ֆինանսական պլանավորում՝ ծախսերի կատարման և եկամուտների կանխատեսման, հիմնական և շրջանառու միջոցների պլանավորում, սպասվելիք դրամական մուտքերի և ելքերի պլանավորում
Խնդիր N4	Կազմակերպության ազատ դրամական միջոցների ներդրման և փոխառու միջոցների ներգրավման աշխատանքներ
Գործընթաց առաջին	Ֆինանսական շուկայի ուսումնասիրություն, առևտրային բանկերի և ֆինանսական այլ կառույցների գործիքների ուսումնասիրություն՝ ավանդներ, դեպոզիտներ, կազմակերպության ազատ դրամական միջոցների արդյունավետ տեղաբաշխման նպատակով, գնահատում հնարավոր ռիսկերը և ներկայացնում է անմիջական ղեկավարին
Կատարման չափանիշը	Կազմակերպությունը գնահատում է ֆինանսական շուկայում ազատ դրամական միջոցների արդյունավետ ներդրման հնարավորությունները և նվազեցնում ռիսկերը
Գործընթաց երկրորդ	Վերլուծում է արժեթղթերի շուկան՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերի, այլ կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի, բաժնետոմսերի և այլ արժեթղթերի հետ կապված գործարքներում ներդրում կատարելու հնարավորությունները և ռիսկերը, ներկայացնում անմիջական ղեկավարին
Կատարման չափանիշը	Ղեկավարությունը օպերատիվ տեղեկացված է արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակին և գնահատում է ներդրումներ կատարելու արդյունավետությունն ու ռիսկերը
Գործընթաց երրորդ	Փոխառու միջոցների համալրման, սեփական կապիտալում ներդրումների ներգրավման նպատակով վարկային և ներդրումային կազմակերպությունների գործիքների ուսումնասիրություն՝ արդյունավետ ներդրումներ կամ վարկային միջոցներ ներգրավելու նպատակով:
Կատարման չափանիշը	Կազմակերպությունը տեղյակ է վարկային և ներդրումային պոտենցիալին և գնահատում է արդյունավետ ներդրումներ և փոխառու միջոցներ ներգրավելու հնարավորությունները և ռիսկերը
Խնդիր N5	Կազմակերպության ֆինանսատեսական գործունեության վերլուծություն
Գործընթաց առաջին	Ֆինանսական գործունեության արդյունքների ամփոփում և վերլուծություն
Կատարման չափանիշը	Ներկայացնում է արտադրանքի իրացման ծավալների վերլուծություն,

	իրականացված ծախսերի վերլուծություն, շահույթի կանխատեսում և գործունեության արդյունավետության գնահատում
Խնդիր N6	Ֆինանսական/ վարկային խորհրդատվություն
Գործընթաց առաջին	Վարկային գործառնություններում ֆինանսիստը (վարկային գործակալը) խորհրդակցում է հաճախորդի հետ, ուսումնասիրում հաճախորդի կարիքները, վճարունակությունը և վստահելիությունը, ներկայացնում է վարկային պորտֆելի համապատասխան առաջարկները
Կատարման չափանիշը	Հաճախորդի վերաբերյալ ամբողջական փաթեթը ներկայացնում է անմիջական ղեկավարին՝ վերջնական գնահատման համար
Խնդիր N7	Վարկային հայտերի, ներդրումային ծրագրերի կազմում և մշակում
Գործընթաց առաջին	Վարկառուի գնահատման արդյունքում վարկային հայտի կազմում, վարկի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի կազմում
Կատարման չափանիշը	Վարկառուի վարկային փաթեթի պատրաստում
Գործընթաց երկրորդ	Կազմակերպության համար փոխառու միջոցների և ներդրումների ներգրավման նպատակով ներդրումային ծրագրի կազմում՝ ընկերության պատմության, շուկայում կազմակերպության ներկա դրության, ներդրումների անհրաժեշտության, դրանց ետ վերադարձի վերլուծության, ֆինանսական հաշվարկների և ներդրումային ժամանակահատվածում ֆինանսական կանխատեսումների վերաբերյալ
Կատարման չափանիշը	Ապահովում է առևտրային բանկին կամ ներդրումային ընկերությանը ներկայացվելիք ամբողջական ներդրումային ծրագիր
Խնդիր N8	Ֆինանսական գործունեության արդյունքների ամփոփում և տվյալների բազայում, գրանցում և պահպանում
Գործընթաց առաջին	Ստացված ֆինանսական փաստաթղթերը համակարգված ձևով կարում է թղթապանակներում, գրքերում, սահմանված ժամկետներում ու կարգով հանձնում է կազմակերպության արխիվ, ստեղծում է ֆինանսական տվյալների էլեկտրոնային բազաների պահուստային պատճեններ, ապահովում է առևտրային գաղտնիք պարունակող փաստաթղթերի պահպանության սահմանված ռեժիմը, աշխատատեղում պահպանում է աշխատանքի անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության կանոնները
Կատարման չափանիշը	Ապահովված է ֆինանսական փաստաթղթերի և էլեկտրոնային բազաների պատշաճ պահպանությունը, արխիվացման ենթակա փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետներում հանձնված են կազմակերպության արխիվ
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	<p>Ֆինանսիստը պատասխանատու է.</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպության ֆինանսական գործառնությունների արդյունավետ կատարմանը՝ ծախսերի պլանավորման, եկամուտների կանխատեսման, շահութաբերության բարձրացման համար, • կազմակերպության ֆինանսական գործունեության վերլուծության • ֆինանսական գործառնությունների ճիշտ փաստաթղթավորման և ձևակերպման, • ֆինանսական տվյալների, հաշվետվությունների և տեղեկությունների արժանահավատության, • ֆինանսական փաստաթղթերի և էլեկտրոնային բազաների պատշաճ պահպանության • աշխատանքային կարգապահության պահպանության համար,
Մասնագիտական գիտելիքները	<ul style="list-style-type: none"> - պետք է իմանա ֆինանսների էությունը, հիմունքները և ֆինանսական շուկան, - պետք է իմանա ֆինանսական պլանի, կանխատեսումային հաշվետվությունների և դրամական միջոցների հաշվետվության շահույթի պլանի կազմման կարգը, -պետք է իմանա ֆինանսական հոսքերի կառավարման ֆիհամար

	<p>Ֆինանսական գործիքների համակարգը</p> <ul style="list-style-type: none"> - պետք է իմանա կազմակերպության սեփական կապիտալի կառավարման հիմունքները, - պետք է իմանա ֆինանսական ակտիվների, եկամտաբերության և ռիսկերի գնահատման մեթոդները - պետք է իմանա կազմակերպության կարճաժամկետ և երկարաժամկետ վարկավորման, ներդրումներ և փոխառու միջոցների ներգրավման կարգը, - պետք է իմանա արժեթղթերի թողարկման և ձեռք բերման կարգը, - պետք է իմանա ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման և ֆինանսական ներդրումների արդյունավետության որոշման կարգը, - պետք է իմանա ֆինանսական վերահսկողության սկզբունքները, - պետք է իմանա ֆինանսական հաշվարկների կարգը և ձևերը, - պետք է իմանա հարկային քաղաքականությունը, հարկերի տեսակները, հարկման կարգը - պետք է իմանա ֆինանսական հաշվառում և հաշվետվություններ, - պետք է իմանա հաշվապահական հաշվառում, - պետք է տիրապետի համակարգչային տեխնիկայի, հեռահաղորդակման և կապի միջոցների, - պետք է տիրապետի աշխատանքային օրենսդրության հիմունքներին
Կարողություններ և հմտությունները	<ul style="list-style-type: none"> - կարողանա պրակտիկորեն օգտագործել գիտելիքները մասնագիտական գործունեության ընթացքում - կարողանա օգտագործել անհրաժեշտ իրավական և նորմատիվային փաստաթղթերը - կարողանա փաստաթղթավորել, գրանցել գործառույթները, - կարողանա կազմել - կարողանա օգտվել համակարգչային բազային (հիմնական) ծրագրերից, - ունենա հաղորդակցման հմտություններ
Լեզուների իմացությունը	<ul style="list-style-type: none"> - հայերեն - երկրորդ օտար լեզվի մասնակի իմացություն, պարզ շփումների համար
Համակարգչային իմացությունը	<ul style="list-style-type: none"> - իմանա համակարգչային բազային գրագիտություն (հիմնական ծրագրերը), - իմանա համակարգչային օպերատորական ծրագրերը:

Հավելված 1

0603 «ՖԻՆԱՆՄԵՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ֆինանսիստը պետք է կարողանա՝

- Կատարել կազմակերպության ֆինանսական գործառնություններ, որոնք ուղղված են ֆինանսական ռեսուրսների ապահովմանը, եկամուտների ձևավորմանը և տեղաբաշխմանը, շահույթի ստացմանը,
- Պլանավորել ընկերության ծախսերը և կանխատեսվող եկամուտները,
- Հաշվարկել ընկերության շահույթը և գնահատել գործունեության շահութաբերությունը,
- Մշակել շահույթի բաշխման նորմատիվներ,
- Պլանավորել ֆինանսական ռեսուրսները և իրականացնել ֆինանսական կանխատեսումներ,
- Ապահովել վճարահաշվարկային պարտավորությունների ֆինանսավորում և կազմակերպության վճարունակության գնահատում,
- Վերլուծել կազմակերպության միջոցների ձևավորման և օգտագործման կառուցվածքը և շարժը,
- Իրականացնել կազմակերպության ազատ ֆինանսական միջոցների արդյունավետ ներդրման,

Ֆինանսական կայունության նպատակով վարկային ռեսուրսների շուկայի ուսումնասիրություն և վերլուծություն,

- Իրականացնել փոխառու միջոցների ներգրավվման և այլ ֆինանսական գործառնություններ (վարկավորում, դրամական միջոցների ներդրում ավանդային գործարքներում),
- Կազմել կազմակերպության ֆինանսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն,
- Իրականացնել կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծություն,
- Գնահատել կազմակերպության իրացվելությունը և վճարունակությունը
- Ձևավորել ֆինանսական տվյալների բազա և փոփոխություններ կատարել տվյալների մշակման ժամանակ օգտագործվող տեղեկատվական և նորմատիվային տեղեկությունների մեջ,
- Մատուցել ֆինանսական խորհրդատվություն վարկառուին/հաճախորդին,
- Կազմել վարկային հայտեր և ներդրումային ծրագրեր,
- Գնահատել հաճախորդի վճարունակության, վստահելիության գործոնը,
- Ապահովել ֆինանսական գործառնությունների պատշաճ փաստաթղթավորումը: